

Ինչէն է որ վառօղբ հատիկ հատիկ է :

— Վասն զի այն հատիկները երբոր բորնկին՝ անոնց բոցը զանգուածին ծակերուն մեջ մտնելով՝ խիստ քիչ ժամանակի մեջ գենքին պարպուելուն պատճառ կըլլայ . քէ որ վառօղբ միակը տուր եւ կամ փոշիի պէս ըլլար՝ այս բանս չէր կրնար ընել :

Վառօղին բեղմունք հանելուն պատճառն ինչ է :

— Նախ՝ վառօղին մեջի նիւրերուն նաստատուն վիճակէ կազային վիճակ անցնիլը .

Երկրորդ՝ վառօղին հանած զանազան կազերուն յանկարծակի ընդարձակիլը :

Վառօղին հանած հոտոյն պատճառն ինչ է :

— Ածխիկի ծծմբուկն է :

Հրագենքին պարպուելէն ետեւ՝ մեջը մնացած հաստատուն մրտորը ինչ բան է :

— Այն մնացորդը փորասիւնի ծծմբուկ է :

Ինչէն է որ վառօղբ կրնայ երկաթէ զուտեք եւ ուրիշ ծանր նիւրեր հեռու նետել .

— Վասն զի կազային նւրերը յանկարծակի ընդարձակուելով՝ գնտակներուն եւ վիզերուն վրայ այնպիսի ճնշում մը կընեն որ անազին ուժով դուրս կընետան զանոնք :

Որոնք են այն կազերն որ վառօղին այրելովը կըձուսանան եւ նրագենքին նետուելուն կօզնեն :

— Ածխային բրուն ու բորակածին կազը . անոնցմէ գատալ՝ հաստատուն գոյացութիւն մը որ փորասիւնի ծծմբուկ կըտուի :

Ինչէն է որ վառօղբ կրնայ մեծամեծ քարեր ճարեցընել ու հեռու նետել :

— Վասն զի վառօղին բորնկիլը նեղ ու պզտիկ տեղի մը մեջ պատանելով . կազերն որ ընդարձակին՝ սաստիկ ճնշում կընեն զէպ ի ջորս դին , ու սոսկապի ուժով ամեն բան կըճարեցընեն :

Ինչո՞ւ համար գենքը շատ անգամ վառօղին ուժէն կըկտորտի :

— Վասն զի վառօղին գենքին մեջ տուած ոյժը այնչափ սաստիկ ու յանկարծական է որ երկրրին կամ պղնձին կարծրութիւնը անոր դէմ չեն կրնար դիմանալ :

Չինու ճայքիկ բտուած խաղալիքը ինչո՞վ կըշինուի :

— Արծրբի շանբակով : — Այս փոշիէն քիչ մը կառնեն , քանի մը հատիկ ձեծած ապակիի կամ աւազի հետ կըխառնեն , ու մագաղաթի երկու հատ նեղ երից անով իրարու հետ կըփակցընեն :

Ինչէն է որ Չինու ճայքիկը երբոր դէպ ի ներմակ կողմը քաշես՝ ճարելու ձայն կընան :

— Վասն զի ապակիին կամ աւազին հատիկները շանբակի փոշիին հետ շփուելուն պէս՝ հարկ է որ բորնկի ու ճարելու ձայն հան :

Թղթէ եւ ուրիշ նիւրերէ շինուած շանբիկները ինչպէս են :

— Անոնք ալ Չինու ճայքիկներուն պէս կըշինուին : Այս խաղալիքները երբոր ուժով գետինը գարնես , կամ սաքով կոխես վրանին , ճարելու ձայն կընան :

Երբոր կէս ֆրանքնոց արծաթը 45 կրամ բորակային բրուի մեջ լուծես , ու այն ջուրը 60 կրամ օղիով տաքցընես , արծրբի շանբակ կըշինուի :

ԱՌՍԿ

ԱՂԱԻՆԻ ԵՒ ԱԳՈՍԻ :

Պանրի կըտոր մը բըռնած՝ ագռաւին մէկն ի կըտուցին ծառի մը վըրայ իջաւ . բառեցաւ .

Պանրին հոտէն աղուխուն բէրին ջըրէրը վազեցին .

Կամաց կամաց գընաց ծառին մօտեցաւ . [բիկ .

Բարի տեսանք , բարի տեսանք , ըսաւ , ագռաւ աղբաւս ինչ տեսք , ինչ փետուրներ , ինչպիսի գոյն՝ գեղէրաւ կըսեմ , քէ որ ձայնիկդ ալ նրման [ցիկ .

Ըլլայ տեսիլդ փետուրներուդ աննըման , Դուն այս անտառին անգիւտ փիւնիկն ես , Թըռչնոց էրամին դու մէկհատիկն ես :

Թընտուամէն ագռաւուկին կարծես քէ խէրը բըռաւ .

Ձայնիս աղուսրութիւնը ցուցընեմ սըւոր ըսաւ .

Կըտուցը լաւ մը բացաւ չըբացաւ ,

Պանրին կըտորը ցատրեց վար ընկաւ :

Աղուէսն առաւ լսփեց պանիրն անուշիկ . Դընա սովքէ ըսաւ , ալ խեղձ ագռաւիկ .

Շողորոքը մարդուն հացը նա կուտայ . Որ անոր խօսքին բեզի պէս կուտայ .

Այս խըրատըս քիչ մը պանիր չէր արծեր : Ագռաւը խաղր ու խայտառակ , մընացեր . Երդուընցաւ որ ալ չըխաբուի , բայց ուշ էր :

ԱՅՅՈՂԹԻՆ :